ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

19 հունվարի 2016 թվականի N 3-Ա

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. N 2335-Ն որոշմամբ հաստատված ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգը,

կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հարություն Հովհաննիսյանին 3 օրով՝ 20.01.2016թ. մինչև 22.01.2016թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ <<Համայնքների ֆինանսիստների միություն>> ՀԿ՝ պաշտոնական գործերով:
2. ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանին, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանին, զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Էդգար Մարտիրոսյանին 3 օրով՝ 20.01.2016թ. մինչև 22.01.2016թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ ՀՀ կառավարության աշխատակազմի գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ ՊՀ՝ պաշտոնական գործերով:
3. ԳԱԶ 3102 մակնիշի 888 ԼԼ 60 պետհամարանիշի ավտոմեքենայի վարորդ Էդիկ Մելքումյանին՝ 1-ին կետով սահմանված ժամանակահատվածում ապահովել տրանսպորտային միջոցով սպասարկումը:
4. Աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել գործուղման ծախսերի վճարումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

2016թ. հունվարի 19
ք. Կապան